

COVID-19

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն Արձագանք COVID-19-ին Աշխատավայրում

Վերջին Թարմացումները՝

1/13/21: Թարմացվել է անդրադառնալու նոր քաղաքականությանը, որը պահանջում է 10 օր կարանտին պահպանել և ինքնուրույն վերահսկել ախտահիշները 11-րդ Օրվանից մինչև 14-րդ Օրը՝ COVID-19-ով հնարավոր վարակվելուց կամ դեպի Լոս Անջելես ուղևորվելուց հետո:

Զանի որ Լոս Անջելեսի Շրջանում COVID-19-ի դեպքերն ավելանում են, մարդիկ պետք է մնան տանը և խուսափեն այլ անձանց հետ շփվելուց: Հիմնական աշխատողներից շատերը պետք է շարունակեն աշխատանքի գնալ՝ այդպիսով ենթարկվելով COVID-19-ով վարակվելու և տարածելու վտանգին: Գործատուները պետք է պատրաստ լինեն արձագանքելու, երբ աշխատավայրում հայտնաբերվի COVID-19-ով վարակման կամ հնարավոր վարակման դեպք:

Վարակված անձ (դեպք) է համարվում այն անձը, որի COVID-19-ի վիրուսային (քթի կամ թքի միջոցով հանձնված) թեստի արդյունքը դրական է, կամ բժիշկը նրան հայտնել է, որ նա վարակված է COVID-19-ով: Գործատուները պետք է տեղում ունենան ծրագիր, երբ անձնակազմի անդամների շրջանում արձանագրվի վարակման դեպք: Ծրագիրը պետք է ներառի վարակված անձին/անձանց տուն՝ ինքնամեկուսացման ուղարկելը, ինչպես նաև տուն՝ ինքնակարանտին պահպանելու ուղարկելը յուրաքանչյուրին, ով սերտ կապ է ունեցել վարակված անձի/անձանց հետ: Որպես ծրագրի մաս՝ գործատուն պետք է ունենա գործընթաց՝ հավաստիանալու, որ կարանտին պահպանող բոլոր աշխատակիցները թեստավորվելու տարբերակ ունեն, որպեսզի գործատուն կարողանա պարզել, թե աշխատավայրում որքանով է տարածված վիրուսը և որքանով է այն վտանգ ներկայացնում մյուս աշխատակիցների կամ այցելուների համար:

Կանխարգելում Աշխատավայրում

Տարածումը կանխելու լավագույն տարբերակը ապահովելն է, որ աշխատավայրում գտնվող բոլոր անձինք հետևեն կանխարգելման ուղղված հիմնական կանոններին:

- [Ֆիզիկական հեռավորության](#) պահպանում (բոլոր աշխատակիցները, հաճախորդները և այցելուները պետք է միմյանցից առնվազն 6 ոտնաչափ հեռավորություն պահպանեն՝ անգամ զրուցելիս)
- Բոլոր աշխատակիցները, հաճախորդները և այցելուները պետք է կրեն [դեմքի ծածկոցներ](#)
- Ձեռքերի հաճախակի լվացման խթանում (սա նշանակում է, որ զուգարանները պետք է ունենան բավարար քանակությամբ օճառ, թղթե սրբիչներ և այլ պարագաներ) և աշխատակիցները պետք է ժամանակ ունենան ձեռքերը լվանալու համար
- Հաճախակի հպման մակերեսների կանոնավոր մաքրում ու ախտահանում
- HVAC համակարգերի գործող կարգավիճակի ապահովում և օդի հոսքի բարելավում, որտեղ հնարավոր է: (Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս [օդավիճակը](#))
- Հիվանդության հիմքով արձակուրդ տրամադրելու ծրագրեր, որոնք աշխատակիցներին թույլ են տալիս տանը մնալ, երբ հիվանդ են, ինչպես նաև հոգ տանել տան հիվանդ անդամի (անդամների) մասին՝ առանց աշխատանքը կորցնելու կամ աշխատաժամերի կրճատման վտանգի: Համոզվեք, որ աշխատակիցները տեղեկացված են այս ծրագրերի մասին
- Ախտահիշների ստուգում՝ նախքան աշխատակիցների կողմից աշխատավայր մուտք գործելը

Երբ աշխատավայրում կա վարակման դեպք կամ որևէ անձ վարակվել է

Եթե աշխատողը հիվանդանում է կամ շփում է ունեցել վարակված անձի հետ (ինչպես սահմանված է վերևում), ապա այդ անձը պետք է անմիջապես տուն ուղարկվի՝ ինքնամեկուսանալու, եթե վարակված է, կամ կարանտին պահպանելու, եթե նա շփվել է վարակված անձի հետ: Այն պահին, երբ վերահսկող անձը լսում է, որ ինչ-որ մեկը հիվանդ է կամ շփում է ունեցել հիվանդ անձի հետ, պետք է ունենա սահմանված սենյակ այդ անձին, որը վարակված է կամ շփվել է վարակված անձի հետ, այլ աշխատակիցներից առանձնացնելու համար: Սա նշանակում է, որ կա տեղ, որտեղ անձը անհրաժեշտության դեպքում կարող է սպասել՝ մինչև որ նա կկարողանա դուրս գալ հաստատության տարածքից և վերադառնալ տուն: Ի հավելումս՝

- Անձը մշտապես պետք է դիմակ կրի
- Եթե անձը լրջորեն հիվանդ է և խնամքի կարիք ունի, ապա մյուս անձինք պետք է դիմակներով լինեն, սահմանափակվեն անձին շատ մոտ գտնվելու ժամանակահատվածը, և անհրաժեշտության և հասանելի լինելու դեպքում պետք է կրեն այլ անձնական պաշտպանիչ սարքավորումներ (ձեռնոցներ, թիկնոց):

Բոլոր գործատուները պետք է հետևեն ԼԱ Շրջանի ՀԱՎ (DPH) [փզնեսների վերաբացման ցանկին](#) աշխատավայրում



COVID-19

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն Արձագանք COVID-19-ին Աշխատավայրում

COVID-19-ի տարածումը կանխելու համար: Շատ դեպքերում այս միջոցառումները կարող են կանխել կամ դանդաղեցնել աշխատավայրում COVID-19-ի հետագա տարածումը:

Կոնտակտավոր Անձանց Քննություն

Աշխատակիցների շրջանում վարակման դեպքի հայտնաբերումից հետո, աշխատակիցը պետք է աշխատի բոլոր կոնտակտավոր անձանց հայտնաբերման ուղղությամբ (և գործատուները և հաստատության տարածքում ժամանակ անցկացրած ցանկացած անձ), որոնք շփվել են վարակված անձի հետ վերջինիս վարակող լինելու ընթացքում:

- Վարակված անձը համարվում է վարակող իր ախտանիշների ի հայտ գալուց 2 օր առաջվանից մինչև մեկուսացման ժամանակի ավարտը (տե՛ս [Տեսախոսք մեկուսացման հարցազրույց](#) COVID-19-ով վարակված անձանց համար):
- Անձը, որն ախտանիշներ չի ունեցել, սակայն COVID-19-ի թեստի պատասխանը դրական է, համարվում է վարակող իր թեստը հանձնելուց 2 օր առաջվանից մինչև թեստ հանձնելուց 10 օր հետո:

Կոնտակտավոր է համարվում աշխատավայրում գտնվող ցանկացած անձը, որը մոտ է գտնվել վարակված անձին՝ վերջինիս վարակող լինելու ընթացքում՝

- 24 ժամվա ընթացքում գտնվել է 6 ոտնաչափ հեռավորության սահմաններում ընդհանուր առմամբ 15 րոպե կամ ավելի, կամ
- Շփում է ունեցել վարակված անձի մարմնի հեղուկների և/կամ արտազատումների հետ՝ օրինակ հագացել կամ փռշտացել են իր մոտ, համատեղ օգտագործել են սպասքը և ուտելու պարագաները:

Ցանկացած անձ, ով սերտ շփում է ունեցել վարակված անձի հետ, պետք է 10 օր տանը կարանտին պահպանի: Նրա կարանտինը կարող է ավարտվել 10 օր անց, եթե ախտանիշներ ի հայտ չեն եկել և, եթե 11-րդ Օրվանից մինչև 14-րդ օրը նա վերահսկում է իր առողջական վիճակը և լրացուցիչ ուշադրություն է դարձնում COVID-19-ի կանոնավոր նախազգուշական միջոցառումներին: Վարակված անձի հետ շփում ունեցած բոլոր անձանց հորդորում ենք COVID-19-ի թեստ հանձնել: Անձնակազմի անդամները, որոնք պետք է մեկուսանան կամ կարանտին պահպանեն և չեն կարող աշխատել տնից, պետք է վճարվեն հիվանդության հիմքով արձակուրդի համար:

Հաշվի առեք, որ 10 օր Կարանտին պահպանել պահանջվում է նաև անձնակազմի ցանկացած անդամից, որը Հարավային Կալիֆորնիայի սահմաններից դուրս ցանկացած վայրից ժամանել է Լոս Անջելեսի Շրջան՝ անկախ այն բանից, նա բնակիչ է, թե՛ նոր ժամանող անձ: Աշխատակցին, որը ճանապարհորդությունից հետո վերադառնում է աշխատանքի, պետք է կարգադրել, որպեսզի գնա տուն՝ հետևելու կարանտին պահպանելու վերոնշյալ կանոններին: Այս կանոնը վերաբերում է բոլորին՝ անկախ այն բանից՝ անձն ունի COVID-19-ի ախտանիշներ, թե ոչ, կամ որևէ զաղափար ունի այն մասին, որ շփվել է վարակված անձի հետ: Ճանապարհորդության կարանտինի մասին լրացուցիչ տեղեկությունների համար տես [Առողջապահության Պատասխանատուի Ճանապարհորդության Կարգը](#) և ՅՏՀ-երը:

Նպատակային Թեստավորում

Նպատակային թեստավորումը կարող է օգտագործվել՝ աշխատավայրում վարակման մեկ կամ մի քանի դեպքերի բացահայտումից հետո դրանց տարածումը գնահատելու համար: Թեստավորելով մարդկանց, որոնք կապ են ունեցել կամ աշխատել են վարակված անձի կամ անձանց հետ, գործատուն կարող է պարզել, թե որքանով է վիրուսը տարածվել աշխատավայրում: Հաշվի առեք, որ եթե նպատակային թեստավորումը բացահայտում է վարակման երկրորդ դեպք, ապա նոր դեպքի շուրջ անհրաժեշտ է սկսել նոր քննություն՝ պարզելու, թե արդյոք տարածումն ավելի շատ տարածքներ է ընդգրկում:

Թեստավորման Ռեսուրսները

- Ապահովագրություն ունեցող աշխատակիցները պետք է զանգահարեն իրենց բժշկին՝ թեստավորման համար, այնուհետև արդյունքները ներկայացնեն գործատուին:
- Ապահովագրություն չունեցող աշխատակիցները կամ որոնց բժիշկները չեն կարող թեստավորում տրամադրել, կարող են այցելել covid19.lacounty.gov/testing կամ զանգահարել 2-1-1՝ անվճար թեստավորման օգնության համար: Այդ թեստերի արդյունքների մասին պետք է հայտնել գործատուին:
- Մեծ աշխատավայրերում, Աշխատակիցների Առողջությունը (Employee Health) հնարավոր է կարողանա տրամադրել թեստավորում կամ ներգրավել թեստավորման մասնավոր ընկերություն:
- Անկախ այն բանից, թե որտեղ կանցկացվի կոնտակտավոր անձանց թեստավորումը, աշխատակիցները պետք է արդյունքների մասին հայտնեն գործատուին: Սա գործատուին թույլ է տալիս իրականացնել կոնտակտավոր անձանց բացահայտման (տույնականացման), կարանտին պահպանելու և թեստավորման լրացուցիչ փուլեր, եթե վարակված անձի հետ սերտ շփում ունեցած անձի թեստը դրական է:

Նպատակային Թեստավորման Դերը

Կարևոր է իմանալ՝ ինչ կարող է կամ չի կարող անել նպատակային թեստավորումը, և ինչպես պետք է այն անդրադառնա դեպքերի կառավարմանը:

Նպատակային թեստավորումը կարող է օգնել՝

- Հայտնաբերել (տույնականացնել) COVID-դրական արդյունք ունեցող ասիմպտոմատիկ աշխատակիցներին այն անձանց շրջանում, որոնք, ըստ ամենայնի, շփում են ունեցել վարակված անձի հետ, որպեսզի հետագա տարածումը հնարավոր լինի սահմանափակել կամ խուսափել դրանից:
- Նպատակային Թեստավորումը ՉԻ՝



COVID-19

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն Արձագանք COVID-19-ին Աշխատավայրում

- Ազատում քննությունն անցկացնելու անհրաժեշտությունից, որպեսզի պարզվի, թե ով է սերտ շփում ունեցել վարակված անձի հետ, որպեսզի այդ կոնտակտավոր անձն ուղարկվի կարանտին պահպանելու:
- Տալիս ճշգրիտ պատկեր այն մասին, թե ով է վարակվել այդ անձից (դեպքից): Թեստավորումը բացահայտում է ժամանակի մեկ կետի մասին: Վարակված անձի թեստի պատասխանը կարող է բացասական լինել սերտ շփում ունենալուց մի քանի օր անց և նա կարող է հիվանդանալ շփումից հետո 5-րդ կամ 6-րդ օրը: Սա նշանակում է, որ ցանկացած սերտ շփում ունեցած անձ պետք է 10 ամբողջական օր կարանտին պահպանի՝ գումարած վերահսկի իր առողջական վիճակը՝ հետևելով նախազգուշական միջոցառումներին (դիմակ կրել, ֆիզիկական հեռավորություն պահպանել և լվանալ ձեռքերը) ևս 4 օր՝ նույնիսկ եթե իր թեստի պատասխանը բացասական է:
- Եթե աշխատավայրում կա լաբորատոր հետազոտության արդյունքում հաստատված 3 կամ ավելի COVID-19-ով վարակման դեպք, ապա գործատուն պետք է զեկուցի այդ խմբակային դեպքի մասին Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչությանը՝ հետևյալ հեռախոսահամարով՝ 1-888-397-3993:

Վերադարձ Աշխատավայր

Հիվանդ աշխատակիցը, որը տուն է ուղարկվել ջերմությունով կամ այլ ախտանիշներով, որոնք կարող են վկայել COVID-19-ի մասին, կամ որի COVID-19-ի թեստի պատասխանը բացասական է կամ բժիշկը հայտնում է, որ նա վարակված չէ COVID-19-ով, կարող է վերադառնալ աշխատանքի, եթե նա 24 ժամ ջերմություն չունի և ջերմությունը իջել է առանց ջերմիջեցնող դեղորայքի օգտագործման, և նրա ախտանիշները բարելավվել են:

Եթե նա չկարողանա թեստ հանձնել կամ այցելել բժշկի, ապա իր ախտանիշների ի հայտ գալու օրվանից սկսած առնվազն 10 ամբողջական օր պետք է մնա տանը՝ մեկուսացված, ինչպես նաև, եթե 24 ժամ ջերմություն չի ունեցել առանց ջերմիջեցնող դեղորայքի օգտագործման, և իր ախտանիշները բարելավվել են: Եթե 10-րդ օրը անձը դեռևս հիվանդ լինի, ապա նա պետք է շարունակի մնալ տանը՝ մինչև իր ախտանիշների բարելավվելը, և առանց ջերմիջեցնող դեղորայքի 24 ժամ ջերմություն չունենալը:

Վարակված անձինք (դեպքերը) կարող են վերադառնալ աշխատանքի իրենց մեկուսացման ժամանակահատվածի ավարտից հետո: Կոնտակտները և այն անձինք, որոնք ճառագայիտորդել են, կարող են վերադառնալ իրենց կարանտինի ավարտից հետո, եթե դրսում գտնվելիս իրենց մոտ ախտանիշներ չի հայտ չեն եկել: Անձնակազմի անդամները, որոնք ավարտել են մեկուսացման կամ կարանտին պահպանելու համար անհրաժեշտ ժամանակահատվածը, կարող են վերադառնալ աշխատանքի և վերսկսել առօրյա գործունեությունը: Անձնակազմի անդամին անհրաժեշտ չէ նամակ Հանրային Առողջապահության կողմից կամ COVID-19-ի թեստի բացասական պատասխան աշխատանքի վերադառնալու համար:

Արձագանք Բռնկմանը

Եթե աշխատավայրում ի հայտ է գալիս բռնկման դեպք, LA Շրջանի Հանրային Առողջապահության Վարչությունը (DPH) պետք է մեկնարկի խմբակային դեպքի պատասխան արձագանք: Խմբակային դեպքը սահմանվում է որպես COVID-19-ով վարակման 3 կամ ավելի դեպքեր այն անձանց շրջանում, որոնք կարող են որոշակի շփում ունենալ աշխատավայրում: Խմբակային դեպքի պատասխան արձագանքը ներառում է՝ վարակի վերահսկման ուղեցույցի և խորհուրդների տրամադրում, տեխնիկական աջակցություն և հաստատությանը հատուկ վերահսկման միջոցառումների իրականացում: Հանրային Առողջապահության դեպքերի կառավարիչը կնշանակվի այս խմբակային դեպքի քննության համար՝ օգնելու ուղղորդել հաստատության պատասխան արձագանքը:

Ամփոփում

COVID-19-ի համայնքային լայն տարածմամբ՝ գործատուները պետք է գործեն այնպես, կարծես աշխատավայրում բոլորը կարող են վարակված լինել COVID-19-ով, ինչպես նաև պատասխանատվություն ստանձնեն տարածումից խուսափելու համար: Սա նշանակում է՝ ապահովել, որպեսզի բոլորը կրեն դեմի ծածկոց, և աշխատակիցներն իրարից առնվազն 6 ոտնաչափ հեռավորություն պահպանեն: Աշխատավայրում գտնվող անձանց թիվը պետք է սահմանափակվի, իսկ մաքրությունը և ձեռքերի հիգիենան պետք է պահպանվի: Կապ հաստատեք LA Շրջանի Հանրային Առողջապահության Վարչության (DPH) հետ, եթե ի հայտ գան վարակման խմբակային դեպքեր: Աշխատավայրում առանց ախտանիշների (ասիմպտոմատիկ) կոնտակտավորների նպատակային թեստավորումը գործատուների համար խորհուրդ տրվող <<գործիք>> է, որը կօգնի գնահատել՝ արդյոք աշխատավայրում հնարավոր են վարակման լրացուցիչ դեպքեր:

Լրացուցիչ Տեղեկություններ

- COVID-19-ի ՀՏԳ-եր Մենեջերների համար՝ <http://www.ph.lacounty.gov/media/Coronavirus/docs/business/FAQ-Managers.pdf>
- Տնային կարանտինի հրահանգներ COVID-19-ով վարակված անձանց կոնտակտավորների համար՝ ph.lacounty.gov/covidquarantine
- Տնային մեկուսացման հրահանգներ COVID-19-ով վարակված անձանց համար՝ ph.lacounty.gov/covidisolation



COVID-19

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն Արձագանք COVID-19-ին Աշխատավայրում

Տե՛ս ԼԱ Շրջանի ՀԱՎ (DPH) [վեբ կայքը](#) COVID-19-ին առնչվող լրացուցիչ աղբյուրների համար:

